# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունվարի 2025 թվականի  N    97  - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ  ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  2023  ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 65-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը   ո ր ո շ ու մ    է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 19-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԼԵՆՏԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 65-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) ցանկը 15-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16-17-րդ կետերով.

«

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 16. | 5402330000 | Թելեր համալրված սինթետիկ (բացի կարի թելերից) մանրածախ վաճառքի համար չբաժնեծրարված՝ ներառյալ 67 դտեքսից պակաս գծային խտությամբ սինթետիկ մենաթելերը --պոլիեթերային | Պոլիեթերային թելեր գուլպայի և կտորի արտադրության համար | կգ | 60 000 | Չինաստան, Հնդկաստան, Թուրքիա | Չինաստան, Հնդկաստան, Թուրքիա | 53 400 000 | |
| 17. | 5206120000 | Մանվածք բամբակե (բացի կարի թելերից)՝ 85% զանգվածային բաժնից պակասբամբակի մանրաթելերի պարունակությամբ՝ մանրածախ վաճառքի համար չբաժնեծրարված. --714,29 դտեքսից պակաս, բայց 232,56 դտեքսից ոչ պակաս գծային խտությամբ (14 մետրական համարից | Բամբակե մանվածք գուլպայի և կտորի արտադրության համար | կգ | 200 000 | Չինաստան, Հնդկաստան, Թուրքիա | Չինաստան, Հնդկաստան, Թուրքիա | 250 000 000 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | բարձր, բայց 43 մետրական համարից ոչ բարձր) | | | | | | | |

».

2) հավելվածի ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «2 701 520 000» թիվը փոխարինել «3 004 920 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.01.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ